

Կատարվող ազգային մեծ տօներն առիթով այս օրերս էջմիածնում պիտի տեղի ունենան ժողովուրդի ժամանակակից հայ ուղղափառութեան մէջ Վարկոր» փոփոխութիւններ անելու մասին: Գրա համար էջմիածին են հրաւիրված հայ «ձեռնհաս» անձինք:

Ա.Մսիս Զ-ին՝ Գրական-Գեղագիտական Սալօնում կայացած ժողովում ես արտայայտեցի իմ կարծիքը էջմիածնում կայանալիք ժողովի իրաւասութեան և ենթադրածս գիտնական ու գրական կարողութեան մասին:

Կարծիք, որ չէր կարող շատ էլ գրական լինել: Ես այն համոզմունքի եմ, որ աւելի ճիշդ, աւելի գեղեցիկ, աւելի քաղաքակրթական ուղղափառութիւն քան այն, ինչ որ տուել է մեզ մեր հին գրականութիւնը, չէ կարող տալ այժմեան և ոչ մի ժողով այն պարզ պատճառով, որ մենք կատարելապէս գիտնականօրէն պատրաստված լեզուագէտներ չունենք: Չունենք նաև գոնէ հնչիւնների վերաբերմամբ նուրբ լսողութիւն ունեցող մատենագիրներ, որոնց ճաշակին կարողանայինք հաւատարմութեամբ միայն մեծ ազգերին նմանվելու յաւակնութիւն, որ այնչափ ծաղրելի է:

Էջմիածնի ժողովը շատ շատ լինելու է դիլլետանտների համագումար այս կամ այն համեմատական աստիճանի պատրաստութեամբ կամ ճաշակով: Իսկ դիլլետանտների որոշումները չեն կարող կարևոր հեղինակութիւն ունենալ ոչ հայ հեղինակների և ոչ հայ ուսուցիչների համար: Այդ որոշումները կը մնան սոսկ որոշումներ և իւրաքանչիւր հեղինակ և ուսուցիչ կը շարունակէ գրել ու դասաւանդել դարձեալ իր քմքի համաձայն:

Մի բան միայն կարող է անել էջմիածնի ժողովը, այն է՝ վերացնել մէջտեղից այդ «վ»-ի և «ւ»-ի խնդիրը, որ չափազանց ծաղրելի կը լինէր, եթէ չը լինէր այնքան վնասակար:

Գրական-Գեղագիտական Սալօնի ժողովում մի քանի ուսուցիչներ գանգատվեցին, որ իրանք շփոթված են, չը գիտեն ինչպէս դասաւանդեն. մի ձեռնարկ կամ դասագիրք գրված է «ու»-ով, միւսը «վ»-ով, մի երրորդը «ւ»-ով: Թէ որն է ճիշդ, որը սխալ, որին պիտի գերազանցութիւն տալ, որը արագաքսել հայ զպրօցից—չը գիտեն:

Միանգամայն իրաւացի գանգատ, որին անհրաժեշտ է բաւարարութիւն տալ:

Ահա միակ բանը, որ կարելի է և պէտք է սպասել էջմիածնի ժողովից: Թող այդ ժողովը որոշէ թէ երեք հնչիւններից որն է հարկաւոր տալ հայ ուսուցչին աշակերտներին, աւանդելու համար: Ես անձամբ «ու»-ի ջերմ կողմնակից եմ, թէ և ինքս մինչև այժմ, դժբաղդաբար, կանօնաւոր չեմ հետևել նրան:

Հայ լեզուի մի տգեղ կողմն է ձայնաւորների բացակայութիւնը և բաղաձայնների շատութիւնը: Գուրս ձգելով նրա միջից մի

ձայնաւոր ևս, մինք դրանով ցոյց կը տանք
ոչ միայն մեր ճաշակի կօպտութիւնը, այլև
մեր տհասութիւնը:

Պէտք է ուսուցիչներին ազատել նեղ վի-
ճակից: Եւ երբ էջմիածնի ժողովը գերա-
զանցութիւն կը տայ երեք հնչիւններից
որևէ մէկին, պէտք է աշխատել, որ իր ու-
րջումը օրինական ոյժ ստանայ, որ նա լի-
նի պարտաւորական բոլոր դասադիրք կազ-
մողների համար, որոնց թիւը ի դէպս ա-
սած, օր-օրի վրա աճում է և որոնք մի
տեսակ անվայել մրցումն են սկսել իրարու
մէջ: Պէտք է հոգացվի, որ միւս հնչիւննե-
րով զրված դասադրքերը արտաքսվին հայ
դպրոցներից:

Իս արդէն պատկանում է նորին վեհա-
փառութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսի
իրաւասութեանը:

Կրկնում եմ, դրանից աւելին անելու ի-
րաւունք և կարողութիւն ունենալ չէ կա-
րող էջմիածնի ժողովը:

Վերջապէս, տգեղ բան կը լինի Սահակի և
Մեսրոպի տօնը կատարելու համար ժողով-
վել և նոյն Սահակի ու Մեսրոպի շինած սքան-
չելի տաճարը քանդել:

Մեր ուղղագրութիւնը կօպված է մեր
անցեալի, մեր դրարար հարուստ գրակա-
նութեան, միւ ժողովրդի, վերջապէս՝ թիւր-
քահայ գրականութեան հետ:

Քանդել այդ կապը՝ կը նշանակէ գործել
պատմական մեծ սխալ: Բաւական է, վերջա-
պէս, որքան աղաւաղեցին մեր նահատակ աշ-
խարհարարը զանազան տգէտ և անճաշակ
«հեղինակներ», իւրաքանչիւրը հետեւելով իր
այլանդակ լսողութեան:

Շիրվանդադէ